ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2013 թվականի ,,Պետական բյուջեի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03 ծրագրի ,,4729 սոցիալական օգնություն դրամական արտահայտությամբ նպաստներ բյուջեից,, հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Մարզպետարանին հատկացված միջոցներից 40.000 /քառասուն հազար/ դրամ հատկացնել <<Զվարթնոց վերածննդի>> հիմնադրամի կողմից անցկացված հայ ժողովրդական, դասական և հոգևոր երգի մրցույթ-փառատոնի եզրափակիչ փուլում մարզը ներկայացնող երկրորդ կարգի դիպլոմ շահած Սիրուն Աղասյանին և խրախուսական մրցանակների արժանացած Հայկանդուխտ Մարգարյանին, Թագուհի Սահակյանին ու Հայկուհի Սարգսյանին պարգևատրելու համար՝ յուրաքանչյուրին 10000 /տաս հազար/ դրամի չափով:
2. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բաղեյանին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ Գեղամ Չարվադարյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ